

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՏՈՒԳԱԹԵՐԹ

Կարգավորող մարմնի կողմից իրավական ակտի վերաբերյալ տեղեկատվությունը ՕԿԱԿ-ին տրամադրելու համար

Հարցեր	Պատասխաններ	Քացատրություններ
1. Կարգավորող մարմին:		Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ օրենքով ստեղծված կամ օրենքով համապատասխան լիազորություններով օժտված մարմնի անվանումը, որի լիազորությունների շրջանակում տվյալ իրավական ակտը ընդունվել կամ մշակվել կամ ներկայացվել է << կառավարության հաստատմանը և կամ կիրարկվել է:
2. Իրավական ակտի անվանումը:		Իրավական ակտի լրիվ և պաշտոնական անվանումը, ինչպես այն սահմանված է << պաշտոնական տեղեկագրում:
3. Իրավական ակտի համարը:		Իրավական ակտի պաշտոնական համարը, ինչպես այն սահմանված է << պաշտոնական տեղեկագրում (օրինակ 43-Ն):
4. Իրավական ակտի բնույթը: (նշել միայն մեկը)	<input type="checkbox"/> Նորմատիվ (Ն) <input type="checkbox"/> Անհատական (Ա) <input type="checkbox"/> Լոկալ (Լ) <input type="checkbox"/> Առանց բնույթի նշումով (փակագծերում նշել իրավական ակտի բնույթը՝ ելնելով ակտի բովանդակությունից)	Կատարել միայն մեկ նշում, այսինքն՝ այն պատասխանը, որը բնորոշում է իրավական ակտի բնույթը: Հաճախ իրավական ակտի համարն արդեն իսկ պարունակում է տեղեկատվություն դրա բնույթի վերաբերյալ (օրինակ 43-Ն , այսինքն՝ ակտն ունի նորմատիվ բնույթ): Նշվում են միայն այն անհատական և լոկալ բնույթի իրավական ակտերը, որոնք չնայած իրենց անհատական կամ լոկալ բնույթի բովանդակության մեջ պարունակում են իրավական նորմ: Լրացուցիչ տեղեկատվության համար տես՝ ուղեցույցը:
5. Արդյո՞ք իրավական ակտը տեղադրված է էլեկտրոնային տվյալների որևէ շտեմարանում:	<input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Այո Եթե այո, նշեք հղումը	Ներկայացնել ինտերնետային այն հասցեն, որտեղ հնարավոր է գտնել տվյալ իրավական ակտը (օրինակ՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80104): Նշել առավել արժանահավատ աղբյուրը:
6. Ընդունման ամսաթիվը:		Այն ամսաթիվը, երբ համապատասխան մարմինն ընդունել է տվյալ իրավական ակտը:
7. Արդյո՞ք տվյալ իրավական ակտը պաշտոնապես հրապարակվել է:	<input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Այո Եթե այո, նշեք << պաշտոնական տեղեկագրի ամսաթիվը, համարը. Ամսաթիվ (օր/ամիս/տարի). Տեղեկագրի համարը.	<< պաշտոնական տեղեկագրում տվյալ իրավական ակտի հրապարակման ամսաթիվը և տեղեկագրի համարը: Այս տեղեկատվությունը պետք է ձեռքբերվի << պաշտոնական տեղեկագրից:
8. Սահմանում է արդյոք բիզնես գործընթաց:	<input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Այո Եթե այո, թվարկել իրավական ակտում առկա բոլոր բիզնես գործընթացները. 1. 2. 3. ...	Այստեղ Կարգավորող մարմինը պետք է նշի այն բոլոր բիզնես գործընթացները, որոնք սահմանվում են տվյալ իրավական ակտով: Հնարավորինս հստակ նշել բիզնես գործընթացների լրիվ անվանումը՝ օգտագործելով յուրաքանչյուր բիզնես գործընթացի համար այն սահմանող իրավական ակտում նշված անվանումները (օրինակ՝ որոշ բիզնես գործընթացների անվանումները հնարավոր է գտնել Կարգավորող մարմնի պաշտոնական կայքէջում):
9. Բիզնես գործընթացի արդյունքում արդյոք տրամադրվում է լիցենզիա կամ թույլտվություն:	<input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Այո Եթե այո, նշեք յուրաքանչյուր բիզնես գործընթացի համար. 1. 2. 3. ...	Նշել նախորդ պատասխանում նշված յուրաքանչյուր բիզնես գործընթացի արդյունքը: Օրինակ՝ որպես արդյունք-փաստաթուղթ կարող է լինել Լիցենզիա, Թույլտվություն, Եզրակացություն կամ այլ թույլտվական փաստաթուղթ:
10. Արդյո՞ք այս իրավական ակտով	<input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Այո	Քնահատել, թե արդյոք՝ տվյալ իրավական ակտն ազդում է միջազգային առևտրի վրա:

կարգավորվող հարաբերություններն առնչվում են միջազգային առևտրին:		
11. Արդյո՞ք իրավական ակտը ներկայումս գտնվում է Ձեր գերատեսչության կողմից փոփոխություններ կամ լրացումներ կատարելու գործընթացում:	<input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> Այո	
Ստուգաթերթը լրացնող անձի անուն/ազգանունը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն		
<p>ԱՅՍ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ՏՐԱՄԱԴՐՎԻ ԹՂԹԱՅԻՆ ԵՎ ԷԼԷԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐՈՎ ՄԻՆՉԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ը</p> <p>Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնին (ՕԿԱԿ) ՀՀ կառավարության աշխատակազմ Էլ. փոստի հասցեն: inventory@regulations.am Սարյան փող. 22 Երևան 0002, Հայաստանի Հանրապետություն</p>		

Գույքագրման ստուգաթերթի լրացման ուղեցույց

ՕԿԱԿ-ի գույքագրման շրջանակները.

Ստուգաթերթը լրացնել տնտեսավարող սուբյեկտից կամ քաղաքացուց որպես որոշակի գործունեության իրականացման պայման որոշակի գործողությունների կատարման պահանջ պարունակող (օրինակ՝ նորմատիվ բնույթի) յուրաքանչյուր իրավական ակտի համար, որն ընդունվել կամ մշակվել կամ կիրարկվել է կամ ներկայացվել է ՀՀ կառավարության հաստատմանը ձեր մարմնի կողմից:

- **Ներառվող իրավական ակտերի օրինակներ.** Պահանջ, երբ քաղաքացին պետք է ներկայացնի հայտ և վճարի պետական փուրք անձնագիր ստանալու համար: Պահանջ, երբ տնտեսավարող սուբյեկտը պետք է իր աշխատակիցներին սովորեցնի անվտանգության կանոնները: Պահանջ, երբ ապրանքներ ներմուծելու համար տնտեսավարող սուբյեկտը պետք է բավարարի որոշակի պայմանների: Տնտեսավարող սուբյեկտի կամ քաղաքացու որոշակի գործունեության արգելք:

Որոշ իրավական ակտեր այս բարեփոխումների շրջանակներից դուրս են, ինչպես օրինակ՝

- **Չներառված.** Անհատական իրավական ակտեր, որոնք ազդում են միայն մեկ տնտեսավարող սուբյեկտի կամ քաղաքացու վրա, օրինակ՝ լիցենզիայի տրամադրման վերաբերյալ որոշում.
- **Չներառված.** Իրավական ակտեր, որոնք ազդում են միայն համապատասխան կարգավորող մարմնի ներսում կամ կարգավորող մարմինների միմյանց միջև ներքին գործավարության վրա:

Ստորև ներկայացվող աղյուսակը ցույց է տալիս այն իրավական ակտերը, որոնք ընդգրկված են բարեփոխումների շրջանակներում և որոնց վերաբերյալ անհրաժեշտ է լրացնել ստուգաթերթը, և այն իրավական ակտերը, որոնք պետք չէ ներառել:

Աղյուսակ 1. Գիյոփինի կարգավորման շրջանակը, գույքագրման և վերանայման փուլեր

Իրավական ակտն ազդեցություն ունի	Գույքագրում
Ավելի քան մեկ քաղաքացու կամ հասարակական կազմակերպության (ՀԿ) ոչ առևտրային գործունեության վրա	Ներառել
Ավելի քան մեկ տնտեսավարող սուբյեկտի առևտրային գործունեության վրա	Ներառել
Կարգավորող մարմնի ներսում կամ կարգավորող մարմինների միմյանց միջև ներքին գործավարության վրա (իրավական ակտեր, որոնք ազդում են միայն օրինակ պետական հատվածի ներքին գործունեության վրա)	Չներառել
Ազգային անվտանգության և պաշտպանության վրա	Չներառել
Մեկ տնտեսավարող սուբյեկտի/ ՀԿ-ի/ քաղաքացու վրա	Չներառել
Քրեական օրենսգիրք (բացառությամբ տնտեսական կարգավորումների խախտման համար սահմանված քրեական պատասխանատվություն սահմանող դրույթների)	Չներառել

Այս բարեփոխումների մեջ ներառված են իրավական ակտերի հետևյալ տեսակները՝

- Օրենքներ
- Նախագահի հրամանագրեր և կարգադրություններ
- Կառավարության որոշումներ
- Վարչապետի որոշումներ
- Կենտրոնական բանկի խորհրդի որոշումներ
- Կարգավորող հանձնաժողովների որոշումներ
- Նախարարների հրամաններ հրամաններ (ներառյալ գերատեսչությունների համատեղ հրամաններ)
- Մարզպետների որոշումներ
- Տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտեր

Ստուգաթերթի կիրառումը ինկորպորացված և ոչ ինկորպորացված իրավական ակտերի դեպքում

Եթե իրավական ակտը ՀՀ Պաշտոնական Տեղեկագրում կամ arils.am էլեկտրոնային կայքում հրապարակվել է որպես ինկորպորացված իրավական ակտ, այսինքն՝ տվյալ իրավական ակտում կատարված լրացումները և/կամ փոփոխությունները ներառված են մայր իրավական ակտում, ապա ինկորպորացված իրավական ակտը պետք է դիտարկել որպես մեկ իրավական ակտ և նրա վերաբերյալ լրացնել միայն մեկ ստուգաթերթ:

Եթե իրավական ակտը ՀՀ Պաշտոնական Տեղեկագրում կամ arils.am էլեկտրոնային կայքում չի հրապարակվել որպես ինկորպորացված իրավական ակտ և մայր իրավական ակտում կատարվել են լրացումներ և/կամ փոփոխություններ, ապա դրանց վերաբերյալ պետք է գույքագրում իրականացնել

առանձին՝ օգտագործելով Գույքագրման ստուգաթերթեր մայր իրավական ակտի և կատարված յուրաքանչյուր լրացման և/կամ փոփոխության համար:

Օգտակար սահմանումներ

Քիզնես պրոցես.

Իրավական ակտով սահմանված ցանկացած պահանջ, որի կատարումը կամ պայմանները ապահովելու համար քաղաքացին կամ տնտեսավարող սուբյեկտը պետք է կատարի որոշակի քայլեր կամ համապատասխանի որոշակի պահանջների, մասնավորապես՝ ներկայացնի տեղեկատվություն, փաստաթղթեր, հայտեր, ձևաթղթեր, վճարներ (կատարի ծախսեր), հաշվետվություններ և այլն:

Գույքագրման ստուգաթերթ. Ձևաթուղթ, որն օգտագործվում է տնտեսավարող սուբյեկտի կամ քաղաքացու գործունեության ցանկացած տեսակի հետ առնչություն ունեցող ՀՀ բոլոր իրավական ակտերը վերհանելու և դրանց ռեեստր ստեղծելու նպատակով: Ստուգաթերթն անհրաժեշտ է գիյոտինի ծրագրի շրջանակներում վերանայման ենթական իրավական ակտերի վերաբերյալ տվյալների շտեմարան ստեղծելու համար:

Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն (ՕԿԱԿ)՝

ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը ստեղծվել է ՀՀ կառավարության որոշմամբ: ՕԿԱԿ-ը պատասխանատու է Հայաստանում Կարգավորիչ Գիյոտին ծրագրի նախապատրաստման, կորդինացման և իրականացման համար:

Կարգավորող մարմիններ՝ Նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական մարմիններ, օրենքով ստեղծված պետական մարմիններ (բացառությամբ Սահմանադրական դատարանի կամ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների), տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն, այսինքն՝ բոլոր այն մարմինները, որոնք ունեն իրավական ակտ ընդունելու կամ մշակելու կամ կիրարկելու կամ այն ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու լիազորություն:

Է-Գիյոտինի տվյալների բազայի թարմացում

Գույքագրումը հիմնականում պետք է ավարտված լինի 2013 թվականի ապրիլի վերջին՝ հիմնված Կարգավորող մարմինների կողմից ներկայացված ստուգաթերթերի վրա: Այնուամենայնիվ, ՕԿԱԿ-ը կարգավորիչ գիյոտին ծրագրի իրականացման ողջ ընթացում կշարունակի թարմացնել և կառավարել Է-Գիյոտինի տվյալների շտեմարանի պարունակությունը: ՕԿԱԿ-ը կթարմացնի իրավական ակտերի և քիզնես գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը՝ կարգավորող մարմինների կամ շահառուների (գործարար շրջանակներ) կողմից ստացված լրացուցիչ տեղեկատվության դեպքում:

Ամենավերջին տեղեկատվության տրամադրման նպատակով կարգավորող մարմիններին և շահառուներին կխնդրվի վերոնշյալ շտեմարանում թերի կամ սխալ տեղեկատվություն հայտաբերելիս անմիջապես տեղեկացնել ՕԿԱԿ-ին: Այսպիսով, ՕԿԱԿ-ի փորձագետները հնարավորություն կունենան թարմացնել և կառավարել բազայի պարունակությունը՝ ապահովելով ամենավերջին տեղեկատվության տրամադրումը: